ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» «_____» 2024 թվականի N ___ - Ն

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել էկոպարեկային ծառայողի ծառայողական զենքը պահելու և կրելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

_____ ___-ի N __-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) ծառայողական զենքը (այսուհետ՝ զենք) պահելու և կրելու հետ կապված հարաբերությունները:
2. Ծառայողին պահելու և կրելու իրավունքով հատկացվում է Ծառայության սպառազինության մեջ ընդգրկված հաշվեցուցակային զենք:
3. Ծառայողին հատկացվող զենքի հետ միասին տրվում են

համապատասխան հարմարանքներ՝ զենքը բացահայտ կամ քողարկված կրելու համար, ինչպես նաև՝ զենքի խնամքի համար նախատեսված պարագաներ:

4. Ծառայողին պահելու և կրելու իրավունքով զենք հատկացվում է նրան պաշտոնի նշանակելու պահից:
5. Ծառայողին պահելու և կրելու իրավունքով զենք հատկացնելու իրավունքը վերապահվում է Ծառայության պետին:
6. Պահելու և կրելու իրավունքով հատկացված զենքը Ծառայողի կողմից գործադրվում է «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

2. **ԶԵՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

7. Պահելու և կրելու իրավունքով զենք ստացած Ծառայողը պարտավոր է սարքին, անվտանգ և մաքուր պահել ստացած զենքը:
8. Զենքի կորուստը բացառելու նպատակով այն պետք է համապատասխան ամրակապով հուսալիորեն ամրացված լինի Ծառայողի համազգեստին:
9. Արգելվում է Ծառայողի կողմից զենք կրելն առանց համապատասխան հարմարանքների (ատրճանակի պատյան, ամրակապ, ինքնաձիգի գոտի և այլն):
10. Զենքը Ծառայողի բնակության վայրում պետք է պահվի փականով ամրացված պահարանում կամ արկղում՝ միջոցներ ձեռնարկելով զենքին այլ անձանց հասանելիությունը բացառելու համար:
11. Քաղաքացիական հագուստ կրող Ծառայողը զենքը կրում է քողարկված:
12. Ծառայողին արգելվում է մերկացնել զենքը, փոխանցել այլ անձանց կամ թողնել առանց հսկողության՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
13. Ծառայողի՝ զենքով ծառայողական գործուղման մեկնելու դեպքում գործուղման վկայականում նշվում են զենքի տեսակը, համարը, արտադրության տարեթիվը, փամփուշտների թիվը և հաստատվում Ծառայության կնիքով:
14. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս Ծառայողը զենքով գործուղվում է միջպետական պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով:
15. Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման դեպքում՝ ժամանման վայրում զենքն անվտանգ պահելու հնարավորության բացակայության դեպքում գործուղված Ծառայողը զենքն ի պահ է հանձնում մոտակա ոստիկանության բաժնի հերթապահ մաս:
16. Ծառայողին հատկացված զենքի, դրա տեխնիկական վիճակի, ինչպես նաև հատուկ պարագաների առկայության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է՝

1) Ծառայողի անմիջական ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ

անգամ՝ Ծառայողի ծառայության մեջ գտնվելու ժամանակ.

2) տվյալ ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ.

3) տվյալ ստորաբաժանման սպառազինության համար պատասխանատու անձի (այսուհետ՝ Հերթափոխի տեսուչ) կողմից՝ տարեկան մեկ անգամ։

17. Այլ ստորաբաժանում տեղափոխվելու, ծառայությունից ազատվելու դեպքերում Ծառայողը պարտավոր է զենքը հանձնել Հերթափոխի տեսուչին։
18. Ծառայողը ստացիոնար բուժման, ուսման կամ արձակուրդ մեկնելիս, ինչպես նաև զենքը պահելու համար հուսալի պայմանների չապահովման դեպքում զենքը ժամանակավորապես ի պահ է հանձնում Հերթափոխի տեսուչին։
19. Ծառայողը, ստորաբաժանման ղեկավարի կարգադրությամբ, պարտավոր է զենքը հանձնել, եթե՝

1) Ծառայողի կողմից խախտվել են սույն կարգով նախատեսված զենքը պահելու և կրելու պայմանները.

2) Ծառայողի ժամանակավորապես ծառայողական պարտականությունների դադարեցման դեպքում.

3) Ծառայողն ազատվել է Ծառայությունում ծառայությունից.

4) Ծառայողին արգելվել է զենք կրել՝ բժշկական եզրակացությամբ։

20. Հերթափոխի տեսուչին հանձնած զենքի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում զենքի հանձնման և ընդունման մատյանում։
21. Զենքը գործադրելու, ինչպես նաև զենքը փչացնելու դեպքերում Ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով և ղեկավարվում տրված ցուցումներով, իսկ զենքը կորցնելու դեպքում՝ նաև հայտնում է այդ մասին ոստիկանությանը։